ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ municipalityofcharentsavan@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«06» հոկտեմբերի 2023 թվականի N 1358
ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԻՐԱՎԱՍՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 01-ի N 68-Ա որոշմամբ հաստատված Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետի, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 11-ին անցկացվելիք երկրորդ նստաշրջանի թիվ 2 արտահերթ նիստին ներկայացվող նախագծերի քննարկման համար սահմանել իրավասու հանձնաժողով.

1.1 ***Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով***

●/Նախագիծ N 85-Ա/
Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին:

●/Նախագիծ N 86-Ն/
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 79-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

●/Նախագիծ N 87-Ա/
Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

1.2 ***Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողով՝***

●/Նախագիծ N 88-Ա/
Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

●/Նախագիծ N 89-Ա/
Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:

●/Նախագիծ N 90-Ա/
Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

•/Նախագիծ N 91-Ա/
Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները վարձակալության ու կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

•/Նախագիծ N 92-Ա/
Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող շինության զբաղեցրած հողատարածքներն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

•/Նախագիծ N 93-Ա/
Քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

•/Նախագիծ N 94-Ա/
Հանրային տարածքների ֆունկցիոնալ նշանակության վերականգնման և պաշտպանությանն ուղղված միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ